ՆՈՐ-ԴԱՐ

№ 216 ՏԱՍՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ Շաբաթ 20 Դեկտեմբերի **1897** Շաբաթ 20 Դեկտեմբերի ՏԱՍՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 216

Տարեկան՝ 10 ռուբլի, վեց ամիսը 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Թիֆլիսում ամիսը՝ 1 ր., համար՝ 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը.

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ" կամ Tiflis, Rédaction „Nor-Dar",

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով: Յայտարարութիւնների բառին՝ 2 կ., ռեկլամների համար՝ կրկնապատիկ:

ՆՈՐ-ԴԱՐ

ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Քաղաքական-գրական ամենօրեայ թերթը առաջիկայ 1898-ին կը հրատարակուի Թիֆլիսում նոյն դիրքով և ծրագրով ամեն օր, բացի կիրակի և տօներին հետևող օրերից:

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի: Թիֆլիսից դուրս՝ ամիսը 1 ր. 50 կ. Թիֆլիսում՝ 1 ր.

ԵՒՐՈՊԱՅԻ և այլ հեռաւոր երկրների բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանկ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ բաժանորդները վճարում են տարեկան 8 դոլլար: «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից միայն:

ԹԻՖԼԻՍՈՒՄ բաժանորդ են գրւում մ ի մ ի ա յ ն «ՆՈՐ-ԴԱՐ»-ի խմբագրատանը:

Խմբագրատունը գտնւում է Լօրիս-Մելիքեան փողոցում պատ-հեռագրատան մօտ:

Օտար քաղաքներից բաժանորդ գրւողները դիմում են խմբագրութեանն այս հասցէով՝ **Тифлисъ, въ редакцію ежедневной газеты НОРЪ-ДАРЪ»** կամ Tiflis, Caucase, rédaction de journal «Nor-Dar»

ОТКРЫТА ПОДПИСКА

НА **1898** ГОДЪ.

(ПЯТЬДЕСЯТЪ ТРЕТІЙ ГОДЪ ИЗДАНІЯ)

НА ГАЗЕТУ

„КАВКАЗЪ".

Съ 1-го января 1897 года „КАВКАЗЪ" выходитъ подъ редакціей

В. Л. Величко.

Въ **1898** году газета будетъ издаваться по той же программѣ, какъ и въ прошломъ году.

Редакція будетъ попрежнему получать спеціальныя телеграммы и корреспонденцій изъ обѣихъ столицъ, а также очерки столичной жизни; попрежнему будутъ помѣщаться *«Откровенныя рѣчи»*, . Л. **Величко**, и воскресные фельетоны (*«Арабески»*), **Бинокля**.

ПОДПИСНАЯ ЦѢНА ОСТАЕТСЯ БЕЗЪ ИЗМѢНЕНІЯ, А ИМЕННО:

Съ доставкою въ Тифлисѣ:	Съ пересылкою иногороднымъ:	По почтовому союзу:
На годъ . 11 р. 50 к.	На годъ. . 13 р. — к.	На годъ. . 18 р. 40 к.
„ ½ года 6 р. — к.	„ ½ года 7 р. — к.	„ ½ года 10 р. — к.
„ 3 мѣс. . 3 р. 50 к.	„ 3 мѣс. . 4 р. — к.	„ 3 мѣс. . 6 р. — р.
„ 1 мѣс. . 1 р. 50 к.	„ 1 мѣс. . 1 р. 75 к.	„ 1 мѣс. . 2 р. — р.

Разсрочка допускается для годовыхъ подписчиковъ по соглашенію съ редакціей, причемъ иногородными вносится по 3 руб.: при подпискѣ, 1-го марта и 1-го мая и по 2 руб.—1 го іюля и 1-го сентября; городскими въ тѣ-же сроки: 3 р., 3 р., 2 р., 2 р. и 1 р 50 к.

Контора „Кавказа", **во избѣжаніе недоразумѣній, проситъ гг. иногородныхъ подписчиковъ точно опредѣлять** въ случаяхъ высылки денегъ менѣе 13 рублей (цѣна годовой подписки), желаютъ-ли они получать газету **въ разсрочку, или на сроки**, соотвѣтствующіе присылаемымъ суммамъ.

NB. Подписка и объявленія принимаются по нижеслѣдующему **АДРЕСУ:**

Г. Тифлисъ, Эриванская площадь, домъ Харазовой.

Тамъ-же принимается подписка на телеграммы „Россійскаго телеграфнаго агентства".

Плата за объявленія (со строки петита или занимаемаго ею мѣста). На послѣднихъ страницахъ: съ мѣстныхъ объявленій (кавказскихъ)—8 к., съ прочихъ—10 коп. за каждый разъ. На первыхъ страницахъ вдвое. За большія или многократныя объявленія по соглашенію. За разсылку особыхъ приложеній 10 руб. съ тысячи.

Частныя объявленія изъ С.-Петербурга, Москвы, Царства Польскаго, Прибалтійскаго края и изъ-за границы принимаются исключительно въ Центральной конторѣ объявленій торговаго дома Л. и Э. Метцль и К° въ Москвѣ (Мясницкая, домъ Ситова) и въ его отдѣленіи въ С.-Петербургѣ (Большая Морская, № 11). (Ф.) 3—1.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Կեղծ մարդասիրութիւնը և կեղծ ազատամտութիւնը մեր մամուլի մէջ:
Քրոնիկոն.—Լուրեր:
Բեմական գործչի մի յոբելեան:
Հայկական եկեղեցի Օդեսայում:
Անպայման ճանապարհին:
Մամուլի շուրջը:
Քաղաքական.—Չինաստան և պետութիւնները:
Խառն լուրեր:
Հեռագրներ:
Բանասիրական:—Թուրք ժողովուրդը:
Տեղեկատու:
Յայտարարութիւններ:

Թիֆլիս, 19 դեկտեմբերի, 1897 թ.

ԿԵՂԾ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԵՂԾ ԱԶԱՏԱՄՏՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԱՄՈՒԼԻ ՄԷՋ

Թէպէտև հայ ժողովուրդն այլազգիների վերաբերութեամբ համբերող է եղել, թէպէտև հրէայ, թուրք հայերի հետ ապրելիս՝ երբէք հայերը դրանց չեն հալածել դաւանութեան տարբերութեան պատճառով, թէպէտև հայադաւանների և կաթոլիկների մէջ մի այնպիսի պժգոհութիւն, հակառակութիւն չի յայտնւել, որ ուշադրութեան արժանի լինէր, այլ տարբեր դաւանութեան պատկանող հայ համայնքները միմեանց հետ հաշտ ապրել են, թէպէտև հայերը յայտնի են իրենց կրօնական համբերութեամբ, և ոչ մի տեղ հրէաները, թէկուզ եւրոպական միջին չափ լուսաւորւած ժողովրդի մէջ, այնպէս հանգիստ, լաւ կացութեան մէջ չեն գտնւել և իրենց ապաստան գտել հալածանքներից, ինչպէս մեր մէջ և մեր երկրում, — բայց և այնպէս այժմեան սիրող հրապարակախօսները պահանջ զգացին ցաւ ստեղծել և ցաւը տարածելու հողը տանել:

Սրանից քանի տարի առաջ այդ կարգի հրապարակախօսները յարուցին առանց կրօնի խտրութեան խնդիրը և քարոզում էին խաղաղ ապրող ժողովրդին համբերող լինել, դաւանութեան տարբերութեան պատճառով միմեանց չհալածել:

Ընդհանուր մարդկային գաղափարներ էին, որ դրանք քարոզում էին, Աւետարանի սրբազան սկզբունքներն էին բացատրում դրանք ճշմարտութեան ծառայելու յաղթելու ձգտող հաստատակամութեան: Կրօնը ներքին համոզմունք է, իսկ մարդու համոզմունքն անբռնաբարելի է. հայադաւան է հայը թէ կաթոլիկ, մահմեդական (լութեր), թէ մովսիսական՝ պէտք է եղբայր լինեն և միմեանց հետ սիրով ապրեն: Ինչը Փրկիչը ասէր, եղբայրութիւն և խաղաղութիւն է քարոզել, խաչ բարձրացել, մարդասիրութեան հիմքը դրել: Բոլոր ազգերը եղբայրներ են, մարդ մարդու պէտք է սիրէ և օգնէ՝ ինչ ազգից կուզէ լինի և ինչ էլ որ դաւանում լինի:

Մարդասիրական, ընդհանուր մարդկային մեծ գաղափարներ քարոզող և լայն հորիզոններ բաց անող հրապարակախօսների մօտ արդարև շատ փոքր տեղ կարող են բռնել, խոստովանում ենք, այն հրապարակախօսները, որոնք պահպանում են միմիայն հայադաւան հայերին և իրենց ժողովրդից դէնը ոչինչ չեն տեսնում, իրենց միտքը, իրենց հոգացողութիւնը միմիայն իրենց քաղաքի, իրենց ժողովրդի համար է:

Խնամել ազգականին — միթէ դա մեծ բան է. օգնել նրան՝ որ քեզ օգնում է, սիրել նրան՝ որ քեզ սիրում է, դրանք թէպէտև բնական զգացմունքներ են, բայց մեծ գործ չեն կատարում:

Սիրեցէք ձեր թշնամիներին, օգնեցէք կարօտեալներին՝ ով կուզէ լինի — ահա մեծ գործը և ճշմարիտ առաքինի գործը:

Մարդասիրութիւն, ազգերի մէջ եղբայրութիւն, համոզմունքի և մտքի ազատութիւն և կրօնական համբերողութիւն քարոզող հրապարակախօսներն անտարակոյս բարձր են իրենց բռնած ընթացքով, իրենց պաշտպանած սկզբունքներով, եթէ միայն անկեղծ են:

Կարո՞ղ էինք հաւատալ այն մարդու մարդասիրական զգացմունքին, երբ տեսնում ենք, որ եօթը լեռներից դէնը գտնւող անծանօթ մարդուն օգնելու հրաւէր է կարդում, բայց իւր աչքի առջև ընկած թշուառներին ոչ թէ օգնութեան ձեռք չէ մեկնում, այլ և վրայից ոտքը դնելով քայլում է:

Կարո՞ղ էինք հաւատալ այն մարդու եղբայրասիրութեան, երբ նա օտար մարդկանց մէջ սէր է քարոզում, այն ժամանակ՝ երբ իւր հարազատներին զրկում, քաղցած և մերկ՝ փողոցն է ձգում:

Այդ մարդասիրութիւնը, այդ եղբայրսիրութիւնը կեղծ է:

Սէրը մարդկութիւնից է ծագում, հարազատից, դրացուց սկսւում. Աւետարանն ասում է. նա՝ որ իւր ծնողին չէ սիրում, ինչպէս կարող է Աստծուն սիրել, որին չէ տեսնում:

Այս խօսքերի խորին իմաստն այն է, թէ այն մարդը՝ որ իրեն օգնողին չի օգնում, ինչպէս կարող է օտարին օգնել, նա՝ որ իրեն սիրողին չէ սիրում, ինչպէս կարող է թշնամուն սիրել, և նա՝ որ իւր ազգի, իրեն մօտիկ ժողովրդի համար չէ մտածում, ինչպէս կարող է սիրել «ընդհանուր մարդկութիւնը»:

Այնպէս փարոսն անշուշտ կեղծ է:

Ինչպէս և կեղծում է այն մարդը, որ մտքի և համոզմունքի ազատութիւն քարոզելով, ուրիշի համոզմունքը չէ յարգում, երբ դա իրենը չէ, և տարբեր համոզմունք ունեցողին հալածում է:

Մեր այժմեան սիրող հրապարակախօսներն իրենց թերթով միասին միշտ կեղծել են, երբ ընդհանուր մարդկային գաղափարներ, քրիստոնէական բարձր սկզբունքներ, եղբայրսիրութիւն, համոզմունքի և կրօնի ազատութիւն են քարոզել:

Ազգերի մէջ եղբայրութեան, մարդասիրական և ընդհանուր մարդկային գաղափարների պաշտպանող և դաւանող, իսկ հայերի մէջ առանձնապէս առանց կրօնի խտրութեան վարդապետութիւնը և կրօնական համբերողութիւն քարոզող մամուլն ինչպէս համոզմունքի բռնաբարողը, թշնամութիւն, ատելութիւն սերմանողն է եղել սկզբից մինչև այսօր:

Մենք կոյրերի և ապուշների հետ գործ չունենք. ով խելք ունի և ընդունակ է հետևելու մեր մամուլին և մեր ժողովրդի կեանքին, այդ շատ շուտ կը նկատի:

Կրօնական համբերողութիւն և եղբայրութիւն քարոզող մամուլն ամեն միջոցներով պաշտպանում է հռոմէական խաւար ժամանակի այն սկզբունքը, որ քարոզում էր թէ՝ Հռոմից դուրս փրկութիւն չը կայ:

Եւ հայը, որդի ու եղբայրներ միմեանցից բաժանւած են, միմեանց թշնամանում են, ամեն գործ, ամեն սկզբունք, ամենասուրբ համոզմունք, առաքինութիւններ, մարդկային արժանապատուութիւն և ամեն հաստատութիւններ զոհ են բերւում «մերն են, թէ ոչ» հարցմունքին:

Կեղծ մարդասիրութիւն, կեղծ ազատամտութիւն, դիմակի տակ մտքի չփոթութիւնը և խաւարումը առաջ է բերում: Այդ է յիշեալ մամուլի մարդկանց կատարած գործը:

Հակառակ մեր ջանքերին, դեկտ. 19-ի՝ ուրբաթ օրուան համար պատրաստած համարը չը կարողացանք լոյս հանել:

ՔՐՈՆԻԿՈՆ

Օդեսից ստացութեամբ մեզ հաղորդում են, որ պրոֆեսոր Տոմսոնը մտադիր է առաջիկայ յունուարից Օդեսայի համալսարանում հայոց լեզուի ամբիոն ունենալ:

—

Թիֆլիսում ստացւած մի մասնաւոր հեռագրից իմանում ենք, որ Սև ծովի վրայ խորտակւել է «Ազով» ընկերութեան «Նովորոսիյսկ» շոգենաւը: Բարեբաղդաբար մարդկային զոհեր տեղի չեն ունեցել: Ապրանքների մեծ մասը ծովն է նետւած: Սև ծովի վրայ ներկայումս խիստ փոթորիկներ են լինում, այնպէս որ «Ռուսական ընկերութեան» «Օլգա» շոգենաւը Փոթի ժամանելու տեղ, տարւել-ընկել է Տրապիզոն:

—

Մեզ գրում են Գանձակից, որ այնտեղ ցորենը բաւականին թանկ է և էլի թանկանում է: Աղքատ դասի դրութիւնը անտանելի է: Եղբայրք Սաղաթէ և Մկրտիչ Աֆանասեանները 1000 պուդ ցորեն են յանձնել Քաղաքային Վարչութեանը, որ աղքատ բնակիչներին ձրի բաժանեն: Ցանկանք, որ այս բարի գործը հետևողներ ունենայ:

—

Ծերացած, աշխատանքի անընդունակ դարձած արհեստաւորներին և նրանց այրիներին ու որբերին խնամելու համար մի աղատանարան հիմնելու գործին, որպէս նպաստ, ժողովուած է մօտ 3000 րուբ.: Բացի դրանից, արհեստաւորներին նպաստող մի փոխ հաստատելու համար բանկին է յանձնուած 1,300 րուբլի:

—

Մենք արդէն հաղորդել էինք, որ մօտենում փաստաբան Պլիւչևսկին բողոք էր ներկայացրել գաւառական պալատին նահանգական դատարանի այն վճռի դէմ, որով նրա իշխան Բաղրատիոն Մուխրանսկուց պահանջելիք 98,750 րուբլու գործի մէջ եղած փաստաթղթերը կեղծ ճանաչուելով վճռել էր յանձնել գործը պրոկուրորին՝ քրէական կարգով քննելու այն: Չորեքշաբթի, դեկտեմբերի 17-ին, գաւառական պալատը քննութեան ենթարկելով պ. Պլիւչևսկու բողոքը, մերժել նրա խնդիրը:

—

Կուսակցական ոգին, ինչպէս ցոյց են տալիս օրինակները, բուն է դրել և Երևանի Թեմական դպրանոցում: Դեռ ևս չէ անցել մի տարի այն օրից, երբ մինչև իրեն պատասխան համարող ուսուցիչը փոփոխում, բազմաթիւ անդ ու զարճ անձինք ներկայութեամբ, ազատեց իր գաղափարակից անաշնին: Ներկայումս էլ, ինչպէս խմանում ենք, աշակերտները ծեծել են իրենց տեսուչ պ. Քարամեանին: Ցիշեալ դէպքի առթիւ գաւառական քննութիւն է նշանակուած:

—

Ֆրանսիական «Revue de viticulture» լրագրի ասելով, Կովկասի այգիներում այս տարուան այգեքաղի ժամանակ գտնուած է մի նոր հիւանդութիւն, որ կոչւում է «Rotblac».

—

Լրագրների ասելով, Դուշէթի գաւառի Օգլիսի գիւղում մասսրութիւն կայ, գիւղատնտեսական մի մասնաւոր դպրոց բանալու:

—

Ներկայումս Թիֆլիսումն է գտնւում յայտնի երգիչ Զաւրամեանը, որ մօտ օրերս Ցիմ քայլերի մասնակցութեամբ Թիֆլիսի ժողովարանի դահլիճում մի համերգ է տալու:

—

Առաջիկայ Թուից Օդեսսում հրատարակուելու է յունական լեզւով մի նոր լրագիր, որի համար արդէն պատշաճաւոր թոյլտուութիւն է ստացուած:

—

Կովկասեան ուսումնարանական վարչութիւնը, «Նով. Օբոզ.»-ի ասելով, խրախուսում է եղել ուր հարկն է Պետերբուրգի համալսարանի կովկասցի չքաւոր ուսանողներին դրամական օժանդակութիւն բաշխելու համար:

—

Երկուշաբթի, դեկտեմ. 15-ին, Թիֆլիսի կրակօկը տօնում էր իր 28 ամեակը: Այդ առթիւ երեկոյեան հանդիսաւոր բանկէտ էր պատրաստուած, որը անեց մինչև լուսաբաց: Ճիշերը ընդհանրապէս շատ ուրախ անցաւ:

—

«Չերն. Վեստ.»-ի ասելով Քութայիսի նահանգը և Բաթումի շրջանը ամբողջապէս ծածկուած են ձեան առատ շերտով: Վերջինիս շատ գիւղերը ձիւնի շատութեան պատճառով զրկուած են հաղորդակցութենից:

—

Առաջիկայ 1898 տարուայ Մեծի պահոց երկրորդ կիսին Թիֆլիսի արքունական թատրոնում երգելու են իտալական օպերաներ, որ ներկայումս կազմակերպում է Փարիզը:

—

Մայրաքաղաքի թերթերի ասելով, ներքին գործերի մինիստրութեանն ներկայացրած է ի հաստատութիւն ռուս երաժշտապէտ Գլինկայի յիշատակը յաւերժացնելու համար կազմակերպուած երաժշտականութիւնը տարածող ընկերութեան կանոնադրութիւնը:

—

Երեքշաբթի, դեկտեմբերի 16-ին, առաւօտեան ժամը 10-ին, տեղի ունեցաւ Թիֆլիսի Զգրաշէն եկեղեցուն կից եղած հայոց ալպայց միջասեան և օրիորդաց երկդասեան երկու դպրոցների բացումը: Այդ դպրոցները փակուած էին սոյն թուի յուլիսի 2-ին եղած Բարձրագոյն հրամանով, որով պահանջւում էր հայոց եկ.-ծխական դպրոցները յանձնել Կովկասեան դպրոցական վարչութեան ձեռքը: Այդ դպրոցները, «Մշակ» լրագրի ասելով, ինչպէս և առաջ, պահուելու են հանգուցեալ այրի Ս. Ի. Կիրակոսեանցի յիշեալ եկեղեցուն նուիրած անշարժ կալուածից ստացուող եկամուտներով, որ տարեկան հասնում է 1,076 րուբ.: Բացի յիշեալ գումարից, այդ դպրոցներին են յատկացնելու իշխան Սումբատեանների բաղանիքի եկամուտի մի մասը (տարեկան 1,200 րուբ.), որ յիշեալ բարեգործ անձինք իր կտակով նուիրել է յատկացրել է Զգրաշէն եկեղեցուն: Այդ գումարներից անհրաժեշտ ծախքերը դուրս եկած մնում է դպրոցի վրայ գործադրելու գումար 1,800 րուբ., այնինչ տարեկան ծախք լինելու է 2,140 ր.: Բայց որովհետև տարեկան ծախքը աւելի շատ է եկամուտից, ուստի որոշուած է իւրաքանչիւր աշակերտից տարեկան 5-ական րուբլի ուսման թոշակ պահանջել: Դպրոցները գնահատուած են լինելու Դիրանկայի եկեղեցուն նուիրած շէնքում, ուր գտնւում էին նրանք և նախքան դպրոցների փակումը:

Ուսուցչական խումբը կազմուած է լինելու հետևեալ կերպով.—տեսուչ-ուսուցչուհի լինելու է օր. Մալումեան, կրօնուսոյց՝ Զաքարեան քահանան, վարժուհիներ՝ օր. Մարկոսեանց, Ջանջուղազեանց և Խուդադեանց: Չեռագործի դասերը տալու են Բուդաղեանյան, իսկ երգեցողութեան դասերը՝ Տարխանեանց դպրոցն: Ցիշեալ խումբը արդէն հաստատել է դպրոցական վերատեսուչը:

Ցիշեալ դպրոցների բացմանը ներկա էին ժողովրդական դպրոցների վերատեսուչ Խ. Ն. Դրոզդովը և տեսուչ Վ. Ն. Պավլովը: Բացման հանդէսը սկսուեց գոհացողական մաղթանքով, որ կատարեց կրօնուսոյց Զաքարեան քահանան: Մաղթանքից յետոյ տէր հայրը դիմեց աշակերտ-աշակերտուհիներին հետևեալ խօսքերով:

«Մեզ բոլորիս համար այս նշանաւոր և ուրախալի օրուան առթիւ, սիրելի երեխայք, ես ինձ պարտք եմ համարում մի քանի խօսք ասել: Աստուած ամեն գործելով առաջին մարդուն, թոյլ է տուել նրան ուտել դրախտի ծառերի բոլոր պտուղներից, բացի մի տեսակից, որը նա անուանել չարը ճանաչելու ծառ: Սակայն, աշխարհիս առաջին մարդը զրկեց այդ պտուղը և ճաշակեց արգելուած ծառի պտուղը, որի պատճառով և արտաքսուեցաւ դրախտից, ուր նա ամբողջովին վայելչութեանց մէջ էր ապրում: Այժմ, սիրելի երեխայքս, ձեզ էլ է Աստուած ներկայումս դրախտը չնորհել, որովհետև դպրոցն էլ եկեղեցու նման ոչ այլ ինչ է, եթէ ոչ երկրային մի դրախտ: Դուք այս դպրոցում պիտի կրթուէք քրիստոնէական հոգով և սովորէք բարի գործեր անել: Դրա համար դուք ունենալու էք առաջնորդներ, որոնք առաջնորդելու են ձեզ դէպի ճշմարիտը, հաստատելու են ձեր մէջ սէր դէպի մերձաւորը և ուսուցանեն Աստուածային պատգամները: Եթէ պատահի, որ դուք արհամարհէք ձեզ տրուելիք բարի ուսումը և փոխարինէք այն չարութեամբ, այդ դէպքում դուք էլ պատժուելու էք այնպէս, ինչպէս պատժուեցաւ մեր նախահայրը...: Այժմ, սիրելի զաւակներս, եկէք աղօթենք մեր Թագաւորի, Համայն Ռուսիոյ Ինքնակալ Կայսեր՝ Նիկոլայ Ալեքսանդրովիչի առողջութեան, Նրա ժառանգի ու Կայսերական ամբողջ Տան բարեկեցութեան համար: Եկէք աղօթենք և մեր Ծերունի Հայրապետի և այն բոլոր գործողների համար, որոնք հնարաւորութիւն տուին մեզ այսօր բանալու այս դպրոցը: Թող ուրեմն, սիրելի երեխաներս, օրհնէ ձեզ Աստուած և օգնական լինի ձեզ ձեր պարապմունքների ժամանակ»:

Ճառից յետոյ, դպրոցական վերատեսուչը մի քանի խօսքով դարձաւ ներկայ երգողներին, որոնցով, «Կավկազի» ասելով, ցանկութիւն յայտնեց, որ ներկայ դպրոցների բացումը բարի օրինակ լինի հայադաւան միւս եկեղեցիներին ու նրանց ծխականներին շուտափոյթ կատարելու Բարձրագոյն կամքը:

Առայժմ բացուած է մի բաժանմունք աղջկայ համար (18 աշակերտներով) և երկու բաժանմունք էլ աղջկանց համար (113 աշակերտուհիներով):

— —

Խմբագրութիւնս ստացել է հետևեալ նորագոյն հրատարակութիւնները.

1) «Օրացոյց 1898 թ.» (պատի) կազմեց Գիւտ քահ. Աղանեան, գինը 50 կ.:

2) «Եղբայրը եղբօր դէմ», Վիկտոր Հիւգօյից, Թիֆլիս, 1898 (?), էջ 48, գինը 5 կ.:

3) Տիկին Լ. Գամիէր—«Հայրենասէր աղջիկն» Թիֆլիս 1898 (?), էջ 24, գինը 5 կ.:

4) Վ. Լունկևիչ—«Պատիկ է, բայց չրատիկ է», Թիֆլիս, 1898 (?), էջ 46, գինը 5 կ.:

5) Լէօ—«Արնաղին», Թիֆլիս, 1898 (?), էջ 48, գինը 5 կ.:

6) Քասիմ—«Կեանքի տեսարաններ», հրատ. Հրատ. Ընկ., Թիֆլիս, 1797, էջ 270, գինը 50 կ.:

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ԳԱՆՁԱԿԻՑ.—Վերջերումս տեղիս հոգևոր կառավարութեան մէջ մի անակընկալ կարգադրութիւն տեղի ունեցաւ: Բանն այն է, որ բարձրապատիւ հայր փոխանորդը, կառավարութեան անդամների գործառնութեանց դէմ բողոքից թեմական Առաջնորդին: Սրբազան առաջնորդը յիշեալ անդամներից բացատրութիւն է պահանջում, որոնք և իրենց բացատրութիւնը տալիս են կոնսիստորիային, բայց նախ քան բացատրութեան տեղ հասնելը, կոնսիստորիայի հրամանով անդամներն արձակւում են և նրանց տեղ նորերը նշանակւում: Արձակուած անդամների տուած խնդրքի համաձայն՝ թէմական իշխանութիւնը քննիչ է նշանակել Չարեքա վանահայր Աստուածատուր վարդապետ Տէր-Յարութիւնեանցին, որը և շարունակում է կառավարութեան գործերը քննել: Ասում են, որ շատ զեղծումներ պիտի հրապարակ ելնեն: Տեսնենք:

—

ՕԴԵՍՍԱՅԻՑ.—Ինչպէս նախընթաց նամակով գուշակել էինք աղքատաց հոգաբարձութեան նախագահի ընտրութեան համար, այնպէս էլ կատարուեց նոյեմբերի 30-ին. ժողովը պ. Թայիրեանին ընտրեց աղքատաց հոգաբարձութեան նախագահ: Բացի մի երկուսից ամենքն էլ գոհ մնացին այս ընտրութիւնից:

—Լսում ենք, որ այս քանի օրս Օդեսսա պիտի գայ անդրա վիճակի առաջնորդը, զանազան եկեղեցական և ուրիշ գործի համար:

—

ՇԱՄՇԱԴԻՆԻՑ.—Վերակիս ժողովրդի վրայ ճնշող ապաւորութիւն թողեց Արզաբ-Օղլու ընկերներից մի քանիսի ազատելու լուրը. մանաւանդ որ այդ ազատողների մէջ են և Միրզի սպանած Ֆաւրքի երկու որդին, որոնցից մէկը՝ Վհաբը հէնց կառքի մէջ վիրաւորուել է Սաքինի գնդակից: Ամեն ոք կարծում էր, թէ աւազակութիւնները վերջանալուց յետոյ ժողովուրդը կհանգստանայ, բայց ընդհակառակը գողութիւնը մեր Շամշադնում մեծ սարսափ է գցել: Գողանում են թէ գիշերով գողից և թէ հանգից:

ԲԵՄԱԿԱՆ ԳՈՐԾՉԻ ՄԻ ՅՈԲԵԼԵԱՆ.

—

Մեր տաղանդաւոր կոմիկ-դերասան պ. Գէորգ Տէր-Դաւթեանի բեմական գործունէութեան 25 ամեակի յոբելեանը, որ կատարուեց չորեքշաբթի, դեկտեմբերի 17-ին, մի փառաւոր հանդէս էր իր տեսակում: Հասարակութիւնը ցոյց տուեց, որ ինքն անտարբեր չէ իւր մայրենի բեմի արժանաւոր մշակի երկար տարիների քրտնաջան աշխատանքների լաւ հարգելն գնահատելու և վարձատրելու գործում: Մեր թատրոնական գործի համար գալլուած հացար ու մի դժուարութիւնների և չքաւորութեան դէմ ամբողջ 25 տարի կռուելով, առանց յուսահատուելու, իւր ոյժերին միայն ապաւինած և լաւագոյն ապագայի յոյսերով պարարելով իրեն, պ. Գ. Տէր-Դաւթեանն իւր բնածին տաղանդը չնորհիւ կարողացել է

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹՈՒՐՔ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ *)

—

Երբ թուրք ժողովուրդը հաղթեալ սկսեց աճել, երբ իւր հայրենիքը նեղ եկաւ իրեն համար, այնուհետև տեղի ունեցաւ պատմական մի երևոյթ, որ Կարլ Մարքսը մեր օրերում միայն գիտնականօրէն բացատրեց: Թուրքերի շարժումը դէպի Արևմուտք սկսուեց հինգերորդ դարի սկզբում: Միաչափ թուրքերի մի մասը, որոնք դեռ վաղուց տիրապետում էին Ուրալի և Վոլգայի մէջ տեղը եղած տարածութիւնը, այժմ Վոլգայից սկսեցին տարածուել մինչև Դանուբ և եկրածրել Կովկասի հիւսիսային մասը: Այդ ժամանակն է նաև որ «Անդ-սրգ կազակների» բազմաթիւ խմբեր սկսում են իջնել դէպի հարաւ, և հարաւ-արևմուտք: Երբ Պարսկաստանի մէջ արդէն յեղափոխութիւն ծագեց՝ Պարթևներին յաջորդեցին Սասանեանք, այն ժամանակ Սասանեան սահմանը դարձաւ մտաւ մեկ թուրք արկածախնդիրների դէմ, որ և կազմում է «Շահնամէ»-ի բովանդակութիւնը: Նաև փոխանակ այն եղաւ, որ թուրքերի մի մեծ մասը վերջնականապէս կարգադրուա հաստատուել Օքսուս և Եաքսարդէս գետերի հովիտների երկայնութեամբ:

Թուրքերի համար պայթականութեան մի անարգել ճանապարհ բացուեցաւ դէպի հարաւ այն ժամանակ՝ երբ արաբները ազդուլին մահմեդականութիւն ընդունեցին: Ուստի թուրքերի պարթևականութեան հոսանքը, որ առաջ բացառապէս ուղղուած էր դէպի հիւսիս, այժմ ուղղուեցաւ դէպի Առաջաւոր Ասիա, Անդրկովկաս, Հայաստանի արևելեան մասերը, Ասորիք և «Ռումների» միւսլիման երկրները:

Բաղդատի խալիֆայութիւնը Աբբասեանց ձեռքն էր: Պարսկաստանի ներքին երկպառակութիւններից օգտուելով, թուրքերն այնուհետև սկսեցին ծորալ դէպի Բաղդադ: Այստեղ նրանք իբրև վարձկան՝ միւսուլմանների ծառայութեան մէջ էին մտնում: Այն թուրքերը, որոնք իրենց երկրի մէջ խաշնաբոյծ հովուականներ էին, այստեղ ամենայն դիւրութեամբ հպատակում էին կրօնական բոլոր կանոններին, թէև նրանք այդ կանոններից ոչինչ չէին հասկանում: Ոչ խրծրբծանք, ոչ քննադատութիւն և ոչ էլ Աստուածաբանութիւն: Այդ կանոնները նրանց համար զինուորական պարզ պատուէրներ էին, որոնց հարկաւոր էր կուրօրէն հնազանդուել: Նրանք միասնական էին դասնում լոկ արտաքին ծէսերը կատարելով: Թուրք վարձկան զինուորներն իրենց ծառայութեան անթերի կատարման մասին էին նկատում իրենց սրբազան կրօնական պաշտամունքը և ընդունելը: Մի անգամ խալամութիւնն ընդունած, նրանք այլ ևս չէին վիճաբանում:

Խալիֆների քաղաքականութիւնն էր այդ արկածախնդիրներին ուղարկել դէպի հիւսիս-արևմուտք, որոնք իրենց սրով պիտի անդրապատէին ինչ երկիր որ կուզէին: Այդ կերպով է, որ հիւսիսային Ասորիքի և Փոքր Ասիայի մէջ նրանք կարողացան ձեռք բերել բազմաթիւ կղզիացած բերդեր և իշխանութիւններ: Իւրաքանչիւր քրիստոնեայ իշխանութիւնից յափշտակուած հողի համար նրանք խալիֆներից առանձին առիթներով էին պատկւում: Ուրեմն թուրքերը մի տեսակ ասպետներ, յառաջամարտիկներ էին խալամութեան, ընդդէմ քրիստոնէութեան:

Ինններորդ դարից սկսած թուրքերը խալամական ճշմարիտ խաչակիրներ էին ընդդէմ բաժանուած քրիստոնէութեան: Այդ արկածախնդիր և ընդմիշտ յառաջ խաղացող ասպետների բաց թողած տեղերը լցնում էին նրանց նորեկ ցեղակիցները, որոնց գլխը նոյնքան թեթև էր, որքան և իրենց թալիքը. բայց նոյնքան լի յոյսերով և յանդգնութեամբ, որքան իրենց նախորդները:

Մի բարձ կարծեցին, որ Թրքաստանն արկածախնդիր մուրացկանների մի անսպառ աղբիւր էր: Աբբասեանց յաղթութիւնից յետոյ, թուրքերը անձրևի պէս էին թափւում:—Արդիւնաւէտ տեղերի, ամաթոշակ սրանողների, հողի և ժառանգութիւն ցանկացողների թիւն անսահման էր: Երբ այդ մուրացկան հեւաների խմբերից մէկը յաջողում էր մի երկրի մէջ հաստատուել, այն ժամանակ նրանց առաջին գործն էր լինում երկրի զինուորական ոյժը իրենց ձեռքը ձգել, և ապա ամենափոքրիկ պատրուակից օգտուելով՝ երկրի տիրոջն արտաքսելով իւր սեփականութիւնից, երկիրը իրենցը համարել:

Երբ տասնևերկրորդ դարում Սելջուկեան կայսրութիւնը քայքայուեցաւ, նրա փլատակների վրայ Փոքր-Ասիայի մէջ տասն ամիրայութիւններ կազմուեցան: Այդ ամիրայութիւններից տասներորդն ամենից աւելի մեր ուշադրութիւնը պիտի գրաւէ, վասնզի այդտեղ կազմակերպուեցաւ իւր անունը փոխ առնելով իւր պետերից մէկից այն ժողովուրդը, որ յետոյ իւր անունը տուաւ Անատոլիային և Բալկանեան թերակղզուն: Ոչ մի բան այնքան նշանաւոր և խորհրդ չէր եղած, որքան Օսմանեան ազգի սկզբնաւորութիւնը: Իւր հռչակաւոր նախորդներից մինը՝ Սուլէյմանը ձգել-հեռացել էր Խորասանից 150 հազար պալթականներով, և ապա հաստատուած Երզնկայի և Աքլաթի մօտերը: Մոնղոլեան աւարառութիւններից հարկադրուած, նրանք սակաւ առ սակաւ սկսան յետս ընկրկել: Սուլէյմանի մահուանից յետոյ այդ փախստականները, որոնք միացած մի բնակարան էին կազմում, ցրուեցան. նոյն իսկ Սուլէյմանի չորս որդիներն իրարից բաժանուեցան: Նրանցից երկուսը վերադարձան հայրենիք՝ Խորասան, իսկ միւս երկուսը Դիւն-Դար և Էրթողրուլ (հերձող) 400 ընտանիքով հաստատուեցան Երզրումի արևմտեան կողմը: Սուլէյմանի յաջորդներն այս տեղից էլ սկսեցին հեռանալ դէպի արևմուտք երթալ, որպէսզի Սելջուկ սուլթանի հովանաւորութիւնը վայելեն: Ըստ աւանդութեան, Էրթողրուլը Սելջուկեններին իւր տուած օգնութեան համար ստացաւ Դումանիչ և Երմէնի լեռներն իբրև ամառային բնակութեան տեղ, իսկ Սեգիւթ դաշտը՝ իբրև ձմերոց: Մինչև այդ ժամանակ, արտաքոյ կարգի մի բան չպատահեցաւ: Խնդիրը բոլորովին փոխուեցաւ, երբ Էրթողրուլին յաջորդեց Օսմանը (ոսկոր բեկանող), որի անունով իւր ժողովուրդը կոչուեցաւ Օսմանլի կամ Օսմաննեան: Օսմանի օրով այդ փոքրիկ ժողովուրդը մի քայլ ևս արաւ դէպի յառաջադիմութիւն խալամութիւնն ընդունելով: Ըստ աւանդութեան, Օսմանը յաճախ կերթար այցելութիւն տալու գիտնական և բարե-

*) Տես «Նոր-Դար» № 215.

այսօր հասարակութեան սիրելին դառնալ և մեր բեմի անհրաժեշտ զարդը:

Դեկտ. 17-ին վրայ ազն. բանկի թատրոնի դահլիճը ծայրէ ի ծայր լիքն էր ընտիր հասարակութեամբ. բոլոր տոմսակները ծախուած էին. շատերը կանգնած էին ոտի վրայ, շատ շատերն էլ տեղ չը լինելու պատճառով ձեռնունայն յետ էին դարձել:

Ներկայացումը սկսուեց «Պէպօյի» առաջին գործողութեամբ, որի մէջ յոբելեարը (Գիքօ) ընդունուեց երկարատև բուռն ծափահարութեամբ և կանաչի տարափով, որ թափւում էր վերևից. ընդ նմին նրան մատուցուեց մի գանձեայ դրամ: Թեպետ երբէք պ. Տէր-Դաւթեանն այնպէս հիանալի կերպով չէր կատարել Գիքօյի դերը, ինչպէս այդ երեկոյ: Մեր տաղանդաւոր կոմիկն անհաման է այդ դերում. Գիքօյին նա է հոգի տալիս, և Գիքօն նրա սեպհականութիւնն է: Ձառ գեղեցիկ էր նաև մեր թատրոնի փառաւոր անցեալը յիշեցնող պ. Ամիրան Մանդինեանը Կակուլու դերում, թէև մեր նոր դերասանների մէջ այդ դերը նոյնպէս լաւ կատարողներ կան, օրինակ հէնց պ. Աբրահամը, որի վրայ չափուած ու ձևուած է այդ «լոթու» դերը: Տ. Սաթենիկ Չմշկեանը, իբրև հին փորձառու դերասանուհի, ցոյց տուեց իր հմտութիւնը Զաւշանի դերում: Ինչ վերաբերում է մեր թատրոնի վետերան պ. Գէորգ Չմշկեանին, որին մեր ծերունազարդ դրամատուրգը նուիրել է իր այդ գլուխգործոցը, պէտք է ասենք, որ նրա վրայ արդէն նկատելի կերպով ազդել են տարիքը. կար ժամանակ, որ Պէպոն, ասում են, նրանն էր, բայց էլ նրանը չէ, թէև իր հոյակ աշխատանքով ասլում, իր քոյլ բաղդատութեան համար գըրուելը հա գլած այդ այքան ձինուսի դերում նա կարողանում է ազդել: Պէպէն իր անմեղ վշտահար սրտի ուժի լաւ թարգման չէր կարող գտնել, քան օր. Խեթարեանին:

Մոլիէրի «Սկապէնի արարքների» երկրորդ գործողութեան մէջ առաւելութեան պատիւ հարկաւ պատկանում էր դարձեալ յոբելեարին: Ժերոնտ և Արգանտ ծերունի ժլատների դերերը բարեխղճութեամբ կատարեցին պ. պ. Միրզոեան և Բէկեան, առաջինը՝ իբրև հին դերասան, որ ինչ-ինչ պատճառներով վերջին տարիներս ծառայում է վրայ բեմին, երկրորդը՝ իբրև թատերասէր: Վատ չէր և պ. Այվազեանը Օկտաւի դերում:

Երրորդ պիէսը, որ ներկայացրին, Փաղինեանի «Հազար Թամանայ կարան» էր, որի մէջ 25 տարի առաջ պ. Տէր-Դաւթեանն առաջին անգամ բեմ է դուրս եկել Սարուխան ծառայի դերում: Այս փոքրիկը, շնորհիւ յոբելեարի, ու. Փառանձեմի, պ.պ. Ամիրան Մանդինեանի և Միրզոեանի, դուրսձալի անցաւ:

Անհատական ներկայացման ամբողջ ընթացքում նկատելի էր, որ բոլոր դերակատարները մի առանձին ոգևորութեան մէջ էին:

Այնուհետև, ժամը 11-ին, սկսուեց բուն յոբելեանի հանդէսը: Վարագոյրը բարձրացաւ: Պայծառ լուսաւորուած բեմի վրայ կիսաշրջան էին կազմել ներկայացուցիչներ, պատգամաւորներ և բոլոր դերասաններն ու դերասանուհիները, որոնք բարձիկների վրայ ձեռքներին բռնած ունէին ներկայացման ընթացքում յոբելեարի ստացած բազմաթիւ թանկագին նուէրները, այլ և դափնեայ պսակներ: Աջ կողմը կանգնած էր յոբելեարը: Հերթով առաջ եկան և ամենք բերանացի, ամենք ուղերձով շնորհաւորեցին ներկայացուցիչներ և պատգամաւորներ Թիֆլիսի դերասանական խմբի, ռուսահպատակ ընկերութեան, վրաց դերասանական խմբի, Բագուի հայոց դերասանական խմբի (որը ուղարկել էր նաև մի արծաթեայ պսակ), Բաթումի թատերասէրների և պ. Փարեանի կողմից: Շնորհաւորանքից յետոյ ամեն մէկը սեղմում էր յոբելեարի ձեռքը և համբուրում:

Շնորհաւորական հեռագիրներ էին ստացուել, ի միջի այլոց, Բագուի հայ երաժշտասիրութիւնից, Բաղախանո հայ երաժշտասիրութիւնից, Երևանի հայ հասարակութիւնից, Նոր-Նախիջևանի դրամատիկական սիրողից, Խարկովի հայ ուսանողներից, ու. Հրաշեայից, պ. Սեդրաք Մանդինեանից այլն:

Ամեն մի ուղերձ և հեռագիր ընդունւում էր բուռն ծափահարութեամբ:

Այս ամենից յետոյ յոբելեարն առաջ եկաւ և մի առ մի շնորհակալութիւն յայտնեց ռուսահպատակ ընկերութեան ներկայացուցչին (ռուսերէն), վրաց դերասանական խմբի ներկայացուցչին (վրացերէն) և ապա հայերէն իր ընկերներին և հասարակութեանը: Վերջնիս դիմեց մի կարճ ճառով, որի մէջ խօսեց իր գործունէութեան մասին և ասաց, որ իրեն այդ երեկոյ մատուցած յարգանքներն անջնջելի կը մնան իր սրտում: Դրկին բուռն ծափահարութիւններ և «կեցցէ»-ներ բեմի վրայ և դահլիճում:

Հանդէսը վերջացաւ: Յոբելեարը դուրս գնաց դերասաններով և դերասանուհիներով շրջապատուած: Դուրսը թատրոնի սիրահար երիտասարդների մի ահագին խումբ ձեռքերի վրայ առաւ յոբելեարին և բարձրագոչ ազդարարներով ու ծափահարութեամբ տարաւ մինչև փողոց:

Գիշերը 'ի պատիւ յոբելեարի «Օրիանտ» հիւրանոցում ճոխ ընթրիք էր պատրաստուած:

**

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ ՕԴԵՍՍԱՅՈՒՄ

Ամսոյս 2-ին հայ ուսանողները տուին առաջական հայկական երեկոյթը: Այս անգամ երեկոյթը բաւական յաջող անցաւ: Խումբը պատրաստել էր Կարս-Մալդան, որն ուսանողների հրաւիրմամբ Քիշնևից եկել էր այստեղ: Երգեցիկ խումբը բաղկացած էր 60—65 հոգուց. երգեցին զանազան երգեր, ազգային, ժողովրդական և եկեղեցական: Պէտք է ասած, որ երգեցողութիւնը բաւական ներդաշնակ էր, բայց հայկական երգեցողութեան ծանօթ անձանց վերայ չէր կարող թողնել այն տպաւորութիւնը, որը տպաւում էր, որովհետև Կարս-Մալդան հայկական երգերը, բացառութեամբ մի երկուսի, բոլորովին փոխել օտարացրել էր. որով և կորցրել էր մեր երգեցողութեան նշանակութիւնը, հոգին, մանաւանդ վերջին — «Սարդու առաջէք»: Նախ՝ որ դրա եղանակը բոլորովին փոխուած էր, այնպէս որ, մինչև որոշ չըլսէին խօսքերը մարդիկս անգամ չէր անցնիէ, թէ այդ եկեղեցական երգ է, երկրորդ՝ մեր համար դեռ հարց է և ցանկալի կլինէր իմանալ՝ արդեօք իրաւունք ուռած է, որ մեր եկեղեցական երգերը բեմ հանուեն և ծառայեն հանդիսականներին իբրև զուարճալիք:

Խմբային երգեցողութիւնից յետոյ, քաղաքային թատրոնի երգողներից մէկ տիկին և մէկ պարոն երգեցին ռուսերէն և իտալերէն մի քանի երգեր. Հեղինակաւորները գոհ մնացին նրանց երգեցողութիւնից և բուռն ծափահարութեամբ մի քանի անգամ կրկնել տուին: Դրանից յետոյ սկսուեցին Եւրոպական պարեր, որ անեցին մինչև լոյս:

Պէտք է ասել, որ երեկոյթը ընդհանրապէս լաւ անցաւ: Արդիւնք եղաւ, մաքուրքը և ծախսը միասին, 1700 րուբլի, իսկ զուտ արդիւնք մնաց 1000 րուբլի:

Այստեղ աւելորդ չէ նկատել մի ուրախական երևոյթ. սկզբներում, այսինքն սրանից մի քանի տարի առաջ, հայկական երեկոյթը մի կատարեալ բեռ էր դարձել Օդեսսայի հայերի համար, խեղճ ուսանողները ինչ հնարներ ասես չէին գործ դնում, մինչև համոզում էին մէկ տոմսակ վերցնելու. այժմ Օդեսսայի հայերը կարծես զարթնել են իրենց դարաւոր քնից և հաշտուել այդ ճակատագրական երևոյթի հետ, այնպէս որ, ոչ թէ չեն դրժում տոմսակ վերցնելու, այլ մինչև անգամ շատ առիթում օգնում էլ են ուսանողներին, մանաւանդ տիկինները: Այս բանը ինքն ըստ ինքեան մի ուրախալի երևոյթ է—անհնել մի այսպիսի թմրած և հայութիւնից օտարացած ժողովրդի մէջ գործելու համար: Ցաւով ենք, որ այդ համոզը հետզհետէ աւելի կ'վառուի:

Գիւլ-Բահար

Օդեսսա, 12 դեկտ.

ԱՄԱՅԱՑԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Թիֆլիսից դէպի Բագու երկաթուղու գծի անցկացնելուց յետոյ Ղազախից դէպի Թիֆլիս ձգուող խճուղին համարեա թէ բոլորովին ամայացաւ: Ճանապարհորդութիւնը դադարեց. կայարանների և կառարանների արանքներում չքնացան բոլոր խանութներն ու չինթիները, հասարները (ДВОРЪ) վերացան առաւօտի բարակելուց և ընդհատուելուց յետոյ. կառավարութիւնից այդ ճանապարհի վրայ նշանակուած չափարներն ու կաբաւոլները աւելորդ համարուեցան, որովհետև դէպի Բագու, Երևան և Կարս գընացող փոստը, աէրութեան և վաճառականական թանկագին ապրանքները Թիֆլիսից դէպի Բագու և մինչև Աղստափայ (Երևան և Կարս գնացողը) ուղարկւում և ուղարկւում են երկաթուղով:

Այդպիսով ադաների ու ինտելիգենտ դասակարգի այդ խճուղով ճանապարհորդելուց յետոյ մինչև այսօր խիստ դըժուար դրութեան մէջ մնացին այն խեղճ գիւղացիները, որոնք տաւար, ոչխար, ձի, խոզ և այլ բաներ են բերում Թիֆլիս վաճառելու: Սրանք իրենց անդը, իրենց դաւառում չեն վաճառում իրենց ինչքը, որովհետև այնտեղ նախ մուշտարի չունեն և երկրորդ այնտեղ խիստ աժան է վաճառւում. ուրեմն մեքանի կոպէկ աւելով ծախելու յոյսն է խղճուկ գիւղացիներին դրդում, որ՝ ամառը փոշի կուլ տալով, իսկ ձմեռը, ցուրտ սառնամանիքներին՝ դողդողալով, ահը սրտումը, մահը մաքումը, ձեռներին փչելով, մի կտոր չոր հացը փէշներում կապած, ամեն մէկը մեքանի հատ տաւար կամ խոզ իրար գցած, գիշեր-ցերեկ ճամբայ գալով բերում են ծախում մի քանի կոպէկ աշխատում և նրանով կամ իրենց ընտանիքի մերկութիւնը ծածկում և կամ կառավարութեան հարկը, կառ ու բէգեառը տալիս:

Բայց պէտ տես, որ թուրք թարաքամաները ար և երբ էլ տեսեն իրենց թուրքութիւնն անում են, չնայելով, որ կառավարութիւնը ներկայումս ամեն հընար գործ է դնում ժողովրդին գողերի և աւազակների ձեռով յոշոտուելուց ազատել և արձակել պարապանց պաշտօնեաներին, բայց այնուամենայնիւ թուրքերը շարունակում են նեղացնել յափշտակել մանաւանդ այդպիսի ամայացած ճանապարհներով անցնող հասարակ ճանապարհորդներին:

Թիֆլիս եկած այդպիսի ճանապարհորդներն անցեալ օրը լաց ու արտասուքով պատմում էին, թէ վերջերիս խճուղու աջ ու ձախ տափարակներում բնակւող թուրք գիւղերի հովիւներն ու երիտասարդները զէնք ու դագանակներ և ահագին թուով կծոտ շներ առած յարձակւում են իրենց վրայ և խիստ ծեծելուց յետոյ, բերանով խոզի երամակն ու նախիրը շների բերանը տալուց, դէպի գէն նայելուց յետոյ, հանում են գրպաններում գըած մեքանի կոպէկներն ու բաց թողնում. ինչ է փողը ինչ գլխագրութիւն, հակառակութիւն է անում յափշտակուողը, վիրաւորում, ծակծկում է նրանց դաշոնի ծայրով և կամ դնդակահար լինելու վտանգի մէջ կոլուկաղ լինում:

Կարճ, մի խօսքով որ ասենք, թուրք սրիկաներն ու մասնէր հովիւներն ամեն անցնողից ճանապարհի հարկ են առնում, չնայելով, որ խճուղին ամայանալուց յետոյ վերացել են նաև «դառաու» առած ուղեկալ լծները: Բայց առաջիններից յետոյ եկող գիւղացիներն աւելի սոսկալի բաներ են պատմում, նրանցից մեքանիսն ասում են, որ փող չունենալու պատճառով ամբողջ ժամերով իրենց կանգնած պահել են ցրտումը, մեքանի խոզ էլ սպանել շներին են տուել, ապա խելք են մէկի վիրաւորել, միւսի բաշլղն հայլն:

Վերջացնելով խօսքս, այս տեսակ յափշտակութիւնների վրայ դարձնելով խճուղու տարածութեան շրջակայքում գտնուող տեղական կառավարութեանց ուշադրութիւնը, առաջարկում ենք պատժել գիւղական տանուտէրերին, որոնց թուլութիւնն է պատճառը, որ իրենց գեղացիներն, ջահէլները համարձակւում են այդպէս հանդէպ կերպով վարուել խղճուկ ճանապարհորդների հետ:

Սարկ. Յ. Ճուղուրեան

պաշա Շէյխ Եալէսլին, որ բնակւում էր Իթ-Բուրուն գիւղի մէջ: Օսմանը սիրահարուեցաւ նրա Մալխաթունն աղջկայ վրայ: Աւանդութիւնը ասում է, որ նա հետևեալ երազը տեսաւ:

Մի օր, երբ նա քնած էր իր սապագայ անկողնի առաջ, երազի մէջ տեսաւ որ Շէյխ Եալէսլիի ծոցից դուրս եկաւ մի լուսնեակ, որ արագօրէն մեծանալով՝ լրիւ լուսին դարձաւ, եկաւ և իր երանաց մէջ հանգչեցաւ: Այն ժամանակ իր ծոցից դուրս եկաւ մի հսկայական ծառ, որի ճիւղերն իրենց սաւերով ծածկեցին երկիրները և ծովերը, գմբէթները և կոթողները, յաղթական սիւները և բուրգերը: Այդ ծառի արմատներից հոսում էին, թւում էր, մարդկութեան մեծ գետերը՝ Տիգրիս, Եփրատ, Նեղոս և Դանուբ ու ստորում բարձրացաւ լեռները՝ Կովկաս, Բալկան, Տօրոս, Ատլաս: Ցանկալի մի բուռն քամի փչելով, տերևների ծայրերը սրի բերանի նման ուղղուեցան դէպի մի կէտ. այդ կէտը մի քաղաք էր, որ գտնւում էր երկու ցամաքների և երկու ծովերի միացած տեղը: Այդ կէտը երևում էր իբրև մի օղակ, զարդարուած երկու զմրուխտով և երկու շափիւղայով:

Մանկութեան մէջ գտնուած ազգերը սովորաբար երազի կերպարանք են տալիս իրենց քաղաքական ծրագրին: Օսմանեան ազգն ունեցաւ քաղաքական մի ձգտում, մի իղձ, որ կեդրոնացրեց իր ամենաարժանաւոր առհամակներից մէկի մէջ. այնուհետև նա իր գոյութիւնը իբրև միջոց նկատեց այդ քաղաքական ծրագիրը իրագործելու համար:

Օսմանեան ազգը, իր գոյութեան ընթացքում, իր մտածմունքը առացել է Չինգիզխաններից, Պարսիկներից և Արաբացիներից. ինքը ծառայել է լոկ իբրև նիւթական ույժ: Այդ նիւթական ույժն օգտւում քաղելով Փոքր Ասիայի և շրջակայ պետութեանց խառնակ ու բաժան դրութիւնից, աշխատեց իսլամութեան տալիս դառնալով՝ իր լոկ քաղաքական ծրագրին իրագործել: Օսմանցիները Մահմեդական միւս ազգութիւններից սկսեցին նկատուիլ որպէս իսլամութեան առաջապահ գունդ, որի դրօշակի տակ մտնել աճապարեցին ամեն ազգի միալիմաններ, ամեն կարգի յանդուգն արկածախնդիրներ, որոնք իրենց կեանքի գինը ցանկանում էին իսլամութեան ընդարձակմանը ծառայել: Օսմանեան ազգի ծաւալմանը մի կողմից նպաստեց այն հանգամանքը, որ նա իրեն ներկայացրեց իբրև ներկայացուցիչ և պեան իսլամութեան, և միւս կողմից այն նըպաստաւոր դրութիւնը, որ այդ նորածին պետութեան շուրջը գտնւող ազգերը թուլացած, բաժան բաժան եղած՝ իրենց անկմանն էին մօտեցած:

Դեռ Մուրատ Ա.-ի օրօք Օսմանցիները մտան Եւրոպա: Բուլղարիա, Սերբիա, Հունգարիա, Բոսնիա, ամբողջ Բալկանեան թերակղզին և Վալախիա դառ դառ պատարատուում էին գոհ լինել մի դիերուած և աշխարհակալական ձգտումներով օրօրուող անհամեմատ ուժեղ ազգի: Մարկոս, Կոսոսօ իրենց հերոսական ընդդիմադրութեամբն անկարող եղան տախական այս պատերազմասէր ժողովրդի առաջն առնել:

Երբ արդէն Բալկանեան թերակղզու հարաւային մասը անցած էր Օսմանցիների ձեռքը, միայն նոր Եւրոպական ազգերը տեսան այն մեծ վտանգը, որ իրենց եւս պիտի կլանէր, եթէ չաճապարէին նրա առաջն առնել: Ուրբանոս Հինգերորդ պապը Խաչակրաց ընդհանուր արշաւանք քարոզեց այս նոր անւեակ բարբարոսների դէմ: Նրա ձայնը անլսելի չմնաց. կազմուեցաւ մի դաշնակցութիւն, որի մէջ մտան բազմաթիւ Ֆրանսիական, Գերմանական, Անգլիական իշխաններ, Հունգարիայի թագաւորը, և այլն: Սակայն Նիկոպոլսի յիշատակալից ճակատամարտի մէջ քրիստոնեաները չարաչար կերպով պարտութիւն կրեցին: Երբ Բալկանեան թերակղզու մեծ մասը մինչև Միջերկրական ծովը Օսմանցիների ձեռքն էր անցած, այն ժամանակ նրանք իրենց ուշադրութիւնը դարձրին նորից դէպի Ասիա: Օսմանցիները շատ մեծ դիւրութեամբ կարողացան գրաւել փոքր Ասիայի մէջ գտնուող փոքրիկ Յոյն իշխանութիւնները, որովհետև բացի այն, որ այդ փոքրիկ քրիստոնեայ իշխանութեանց, ինչպէս նաև Սելջուկեան կայսրութեան փլատակների վրայ կազմուած միւս իսլամ ամիրայութեանց մէջ ընդհանուր համերաշխութեան կապ չկար, նոյն իսկ այդ փոքրիկ իշխանութիւններն էին, որ աշխատում էին իրարու ոչնչացնել Օսմանցիների ձեռքով: Հայկական փոքրիկ իշխանութիւնները ևս նիւթապէս անկարող էին յարձակողական դիրքի մէջ մտնել: Մնացել էին միայն Բիւզանդական կայսրները: Այդ թուլամոլ թագաւորները, մանաւանդ վերջինները, աւելի աստուածաբանական խնդիրներով էին զբաղուած, քան թէ քաղաքականով: Նրանք այնքան անհեռատես եղան, որ չաճապարեցին օգտուել Չինական կայսրների հեռատես և վերջապէս առաջարկութիւնից: Չինական կայսրները դարերից իվեր անընդհատ պատերազմներ էին մղած այդ խառնիճաղանջ ազգի դէմ: Աչքի առաջ ունենալով այս Ասիական նորագրի բարբարոսների յարձակումը, այդ ներկայացուցիչներից մինն՝ Օսմանցիների արդէն սկսել էին սիրահարուել անել բազմաթիւ քաղաքակիրթ երկիրներ: Չինական կայսրներն օգնութեան ձեռք ուզեցին կարկառել Ասիայի քրիստոնեայ ազգերին, որոնց այդ ժամանակուան ներկայացուցիչը դժբաղդաբար համարւում էր թագաւորական այն տունը, որի մայրաքաղաքն էր Բիւզանդիոնը: Չինական կայսրները, բաց է ի բաց, մի քանի անգամ բիւզանդական կայսրներին առաջարկեցին միանալ, դաշնակցել և իրենց օգնի մէջ հեռացնել անապատի այդ գաւառներին և քաղաքակրթութեան այդ անհաշտ թշնամիներին:

Դժբաղդաբար թուլամոլթ Պալէոլոգները չկարողացան այդ առաջարկութիւնից օգտուել: Ուստի Ասիայի և Եւրոպայի դռները բաց մնացին Օսմանցիների առաջ:

Զանցաւ երկար ժամանակ և Օսմանցիները տէր եղան հիւսիսային Աֆրիկէի, Արաբիայի, Հայաստանի մեծ մասին, Սև ծովի հիւսիսային ափերին, Փոքր-Ասիային, Սիրիային և Բալկանեան ամբողջ թերակղզուն: Օսմանի երազը իրագործուած էր: Օսմանեան ազգը իր քաղաքական իդէալը իրագործուած տեսաւ. բայց ինչ էր՝ թէ նա իր աշխարհակալութեանց յարատեւութիւնը պիտի կարողանար ապահովել: Պատմութեան ընթացքը ցոյց տուեց որ՝ ո՛չ:

(Վերջը միւս անգամ)

Ս. ՍԱՊԱՀ-ԳՒՒԼԵԱՆ

ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

Անգլօ-հնդկական մամուլի մէջ երկիւղ են յայտնում այն մասին, որ ռուսական առեւտուրն հետզհետէ առաջադիմում և զարգանում է Պարսկաստանում և չինական Թուրքաստանում։ Financial «Times»-ն ասում է.

«Փակելով իր կովկասեան սահմանը և գրեթէ ամեն տեղ արգելառիթ մաքս նշանակելով, յետագայում էլ մաքսատներով շղթայելով միջին-ասիական սահմանը, Ռուսիան մահացու հարուած տուեց բրիտանական և հնդկական առեւտրին։ Անդրկասպեան երկրի երկաթուղին դիւրացնում է ռուսական ապրանքների տեղափոխումը հիւսիսային Պարսկաստանի առեւտրական խոշոր կենդրոններից մէկը։--Մաշադ-Ուշտ-Ղազբենի նոր երկաթուղին բաց է անում այդ ապրանքների համար հիւսիսային Պարսկաստանի կեդրոնական մասը, իսկ Բագուից մինչև Թեհրան շինելիք երկաթուղին Ռուսիայի ձեռք կըձգի այդ ամբողջ երկիրը ինչպէս առեւտրական, այնպէս և քաղաքական տեսակէտից։ Մինչդեռ Մեծ Բրիտանիայից կամ Հնդկաստանից հիւսիսային Պարսկաստան ուղարկուող ապրանքները գնում են երկար և դժուարին ճանապարհով, մի քանի անգամ ձեռքից ձեռք են անցնում և երբ հասնում են նշանակուած տեղը, նրանց գինը բաւական բարձրանում է։ Մի ուրիշ միջոց, որ նպաստում է ռուս-պարսկական առեւտրին, այդ պրեմէաններն Ռուսիայի սահմանած սիստեմն է, որ մեծ նշանակութիւն ունի շաքարի և բամբակի ապրանքների արտահանութեան համար և մեծ վնաս է հասցրել բրիտանական և հնդկական առեւտրին։ Այդ կողմից շատ նպաստում է նաև այն հանգամանքը, որ Ռուսիան Պարսկաստանում հիւպատոսական նոր գործակալութիւններ է հիմնել և խրախուսում է ռուս վաճառականներին գրասենեակներ հիմնելու Պարսկաստանում»։

*** «Նովոստի» լրագրի մէջ Gardanus-ը խօսում է բարեգործութեան մասին։

«Տանջուողներին և բաղդաւորներին օգնելու համար կոչ անելն օգտակար է ոչ թէ միայն նրա համար, որ թեթեւութիւն է բերում կարօտեալ մարդկանց, այլ և նրա համար, որ կուշտ և իրենց վիճակից գոհ մարդիկ, որոնք տրամադիր են դիւրաւ մոռանալու, թէ որքան քաղցածներ կան իրենց չուրջը, այնուամենայնիւ գէթ մի րոպէ իրենց ուշադրութիւնը դարձնում են այն կողմը, որտեղից լացի և հառաչանքների ձայներ են գալիս։

«Ի հարկէ, ամեն մի օգնութիւն, որ հիմնուած է միայն բարեգործութեան վրայ, պալլիատիւ գործ է հանդիսանում և ռիգորիստները, որոնք մերժում են ամեն տեսակ բարեգործութիւն անվերջի, յաւիտենականութեան և այլ տեսակէտից, կատարելապէս իրաւացի են գուցէ։ Բայց մարդը մարդ է մնում. նա թոյլ է, նա չնչին է, նա յանցագործ է, նա սառն է, բայց նրա մէջ կայ մի գիծ, մի անմահ և լաւ գիծ.—Նա չի կարող տեսնել տանջանքներ, նա չի կարող լսել հառաչանքներ և հեկեկանքներ։ Նա, ի հարկէ, գիտէ, որ ամեն մի քայլ տանջուողներ և օգնութեան կարօտ ունեցողներ կան։ Բայց այդ գիտակցութիւնը ներգործում է միայն շատ քչերի վրայ. դրանք ընտիր, առանձնապէս զգայուն սիրտ ունեցողներն են. իսկ մեծամասնութիւնը, այնուամենայնիւ, տրամադիր է անսասան անտարբերութիւն պահպանել այն դէպքերում, երբ այդ տանջանքներին անձամբ ականատես, կենդանի վկայ չի լինում։ Այս, ի հարկ է, ցաւալի բան է. բայց, փառք Աստուծոյ, որ հեծկլտանքների և տանջանքերի գէթ սառնասիրտ վկայ չի կարող լինել մարդ։ Աստուած չանէ, եթէ մենք հասնենք մինչև այն տեղ, որ մարդկային վշտի այդ արտայայտութիւններն էլ այլ ևս չազդեն մեզ»։

*** Թէ երբեմն «անաջող ամուսնութիւնից» ինչպիսի անախորժ անհամութիւններ կարող են ծագել մարդու համար, երեւում է հետեւեալ կուրեօզից, որ պատմում է գերմանական բժշկական մի թերթ.

«Մի բժիշկ Ռոլլեր (այժմ հանգուցեալ) ըսկզբում Լէնդենհաուզի պետական գժանոցի տեսուչն էր, բայց յետոյ կամեցաւ Օստենդում մասնաւոր բուժարան բանալ հոգեկան հիւանդների համար։ Պոտսդամի նահանգական փաշութիւնը թոյլ չը տուեց նրան բանալ այդ բուժարանը, պատճառաբանելով, որ նա իր անյաջող ամուսնութեամբ ապացուցել է, որ մարդկանց լաւ ճանաչելու ընդունակութիւն չունի, մինչդեռ այդ բանն անհրաժեշտ է հոգեկան հիւանդների բժշկի գործունէութեան համար։ Ռոլլերը, հիմնուելով վերոյիշեալ պետական գժանոցում ունեցած իր անբիծ գործունէութեան վրայ, որի մասին վկայական ունէր, և տարակելով, թէ մինչև անգամ այն դէպքում, եթէ իր կնոջ հասցէին ուղղուած յանդիմանութիւններն արդարացի էլ լինէին, ինքն այնուամենայնիւ չէր կարող պատասխանել՝ - նահանգական փաշութեան վճռի դէմ բողոքեց դատարանին։ Վերջինս արդարացի գտաւ Ռոլլերի բողոքը և փոխեց նահանգական փաշութեան վճիռը»։

Եթէ այդպիսի գործերում գերմանական փաստաբանների տեսակէտից նայելու լինէինք, այն ժամանակ քանի՞ ամուսնացած մարդ վստահութեամբ կարող է ասել, որ ինքը թոյլտուութիւն կըստանայ այս կամ այն հաստատութիւնը բանալու...

*** Օստերեիկերեսյ լրագիրներից մէկը կազմել է ամենաթանկ հեռագիրների մի ցուցակ։

«Այդ ցուցակի մէջ առաջին տեղը բռնում է 64,000 մարկ արժեցող մի հեռագիր, որ մի քանի տարի առաջ պարլամենտի յանձնարարութեամբ Անգլիայից ուղարկուած էր Աւստրալիա։ Այնուհետեւ գալիս է 4,000 բառից բաղկացած մի հեռագիր, որ ստացուած է Ռէյտերի գործակալութեան մէջ Լոնդոնում և որի մէջ առաջ են բերուած մարդասպան Դիմինգի դատական քննութեան մանրամասնութիւնները։ Քսան ժամուայ ընթացքում հեռագրութիւն անմատչելի էր ուրիշ հեռագիրների համար. յիշեալ հեռագիրը նստեց 30,000 մարկ։ Բուէնոս-Այրեսից հեռագրով ստացած մի թղթակցութեան համար Լոնդոնի «Times» լրագիրը վճարեց անցեալները 12,000 մարկ և դրանից յետոյ մի ուրիշ աւելի կարճ հեռագրի համար—7,332 մարկ։ Ամենաթանկ մասնաւոր հեռագիրն ուղարկել էր Իտալիայի թագուհին իր որդու՝ Աօստի պրինցի մահուան առթիւ. այդ հեռագիրը, որ նստեց 10,618 մարկ, ուղարկուած էր Աբբուցցի պրինցին, որն այդ ժամանակ գտնւում էր իր շոգենաւի մէջ, Ռիօ-դը-Ժանէյրօ նաւահանգստում»։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՉԻՆԱՍՏԱՆ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

Ճանհայից «Daily Mail»-ին հեռագրում են, թէ չինաց աղբուները միծամեծները կայսրին խորհուրդ են տալիս, որ նա իր մայրաքաղաքը տեղափոխի Նանկին։

—Լուրեր են շրջում, թէ Անգլիային առաջարկուած է, որ նա իր հովանաւորութեան տակ առնէ Եան-ցէ-Կիանգի և Ուէյսա-Ռիվերի հովիտները։

Լոնդոնից հաղորդում են, որ անգլիական ծովակալութեան մէջ ներկայումս անհոգային գործունէութիւն է նկատւում։

—«Daily Nenvs»-ը հաղորդում է, որ չինական ջրերում գտնուած անգլիական նաւատորմը բաղկացած է քսանութ մարտանաւերից։

—Պորտ-Արտուրի գրաւման առթիւ Բեռլինից գրում են. «Ռուսիան վաղուց արդէն իր ձեռքին ունէր Պորտ-Արտուրը իբրև ձմեռային նաւակայան։ Արդէն կատարուած գրաւումը թոյլ է տալիս եզրակացնելու, որ չինաց կառավարութիւնը դէմ չէ այդ բանին, որովհետև այդ նշանաւոր գիւղի գրաւումով նա այժմ իրեն ապահովուած է համարում ուրիշ յարձակումներից։ Չինաստանի բաժանման մասին, ի հարկէ, խօսք չկայ։ Նրա բարձրագոյն իրաւունքներին ոչ մի վնաս չի տուել Պորտ-Արտուրի և Քիաօ-Չաուի գրաւումով։ Դրանք կեդրոն են, որտեղից քաղաքակրթութիւնը պիտի ծաւալի չինական ժողովրդի մէջ։ Ճապոնիայի կողմից, որը գրաւած ունի Պորտ-Արտուրի դիմացը գտնուող Վէյ-Խայ-Վէյ նաւահանգիստը, մինչև որ Չինաստանից լիովին ստանայ պատերազմական տուգանքը, թշնամական ոչ մի գործողութիւն չի կարելի սպասել Ռուսիայի դէմ։ Թէ ինչ կանի Անգլիան, այդ միայն իրեն է յայտնի։ Բոլորովին հասկանալի է, թէ ինչու է գայրանում անգլիական մամուլը։ Բայց ոչ մի կասկած չի կարող լինել, որ անգլիական քաղաքականութիւնն այժմ քաղում է միւս պետութիւնների հետ մեծամասնութեամբ վարուելու պտուղները։ Սակայն նա կարող է մխիթարուել այն բանով, որ հարստում իր յառաջ խաղացման դէմ արգելքներ չի հանդիպել»։

—Ռուսական նաւերի Պորտ-Արտուր մտնելու առթիւ «Neue Freie Presse»-ը գրում է. «Պորտ-Արտուրն իրենց ձեռքին ունենալով, ռուսները կը տիրապետեն դէպի Պեկին տանող երկու ճանապարհին և նոյն իսկ չինաց մայրաքաղաքին։ Այս դէպքում ճապոնացիները, ի հարկէ, անաւշտակ չեն թողնի Վէյ-Խայ-Վէյը։ Պորտ-Արտուրի գրաւումը չէր կարող տեղի ունենալ ոչ այլ կերպ, քան եթէ Ճապոնիայի գիտութեամբ, որ անկասկած Քիաօ-Չաուի գրաւման հակակշիռն է համդիսանում»։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Սեւ հարսնացու։ — Տանս-Մարտանի պատանիդիր պրինցեսը մտադիր է Փիջի կղզիներից առաջիկայ թուին ճանապարհորդել Եւրոպա, իրեն համար մի փեսացու գտնելու նպատակով։ Պրինցեսը ներկայումս, բացի իր կալուածների սեփականութեան եկամուտից, ստանում է բրիտանական գաղութի վարչութիւնից տարեկան 140,000 մարկ, որը նրա գահ բարձրանալուց յետոյ կրկնապատկուելու է։ Պրինցեսը ցանկանում է մարդու գնալ մի սպիտակամորթ և յայտնի ցեղից սերուած եւրոպացու հետ, որը ապագայում նրա ակէյութեան առաջին մինիստրը և բարձրագոյն դատաւորը պէտք է լինի։ Ամուսին որոնող պրինցեսը բոլորովին սեւամորթ է։

ՀԵՌԱԳՐ.ՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 դեկտեմբերի.—Ներքին գործերի, լուսաւորութեան և արդարադատութեան մինիստրները ս. սինոդի առաջ-պրոկուրորի հետ միասին ուսումնական բոլորովին դադարեցնել «Նով. Սլովօ» թերթի հրատարակութիւնը։

ՓԱՐԻԶ.—Պանամայի գործը։ Պրոկուրորը հրաժարուեց Դայերին, Ռիգօյին, Լեգանին և Բուալէին մեղադրելուց և պահանջեց միւսներին դատապարտել։ Սկսուած են հակաճառութիւնները։

ԼՈՆԴՈՆԻՑ.—Հաստատ աղբիւրներից ստացուած տեղեկութեանց հիման վրայ հերքում են անգլիացիների կողմից Քորէայի վերաբերմամբ վերջնագիր տալու և նրանց զօրքերը Չեմուլպօ ափ իջեցնելու մասին եղած լուրերը։ Ճապոնական նաւատորմիղը չի հեռացել Նագասակից։

ԿԱՆԷ. Ծովակալները յայտարարեցին նահանգապետին, որ Թիւրքիան անզեկացրել է իրենց, թէ մտադիր է Կրետէ ուղարկել 5,000 զինուոր և յետ կոչել նոյն թուով արձակման անցածներին։ Ծովակալներն անյապաղ քննութեան են առնելու վերոյիշեալ խնդիրը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—18 դեկտ.: Հրատարակուած է ներքին գործերի մինիստրի կարգադրութիւնները, որ վերաբերում է մետաղէ փողերը պոստով աւելի դիւրին կերպով ուղարկելուն։

ՓԱՐԻԶ.—Պանամայի գործը։ Պաշտպանողական ճառերը շարունակւում են առանց միջադէպերի։

Կ. ՊՈԼԻՍ.—Թրքական շրջաններում մինիստրական կազմակերպութեան մէջ սպելիք փոփոխութեանց մասին տարածուած լուրերը անհիմն չեն համարւում։ Ասում են, որ Ջէլալ-Էդդին փաշան նշանակուելու է մեծ վեզիր։

ԼՈՆԴՈՆ.—Ծովակալութիւնից ստացուած տեղեկութեանց համաձայն, չինական ջրերում լողող բրիտանական նաւախումբը ներկայումս գտնւում է Համիլտոն նաւահանգստի առաջ։ Նաւախմբի Չեմուլպօ հասնելու մասին դեռ ոչինչ յայտնի չէ, թէև հնարաւոր է որ սովորական նաւարկութեան միջոցին մի քանի նաւեր կարող են մտնել այդ նաւահանգիստը։

ԿԱՆԷ.—Այցոյին ժողովի մի պատգամաւորութիւն դեսպանների համար պատրաստած մի գրաւոր զեկուցագիր է ներկայացրել, որով յայտնում է, թէ ապագայ ընդհանուր-նահանգապետին ժողովը կոչնէ միայն այն դէպքում, երբ թրքական զօրքերը կը հեռանան Կրետէից։ Այդ բանը նա պատճառաբանում է նրանով, որ հակառակ դէպքում ոչ որ չի կարող երաշխաւորել երկրի խաղերը վերադարձող թուրքերի կեանքի համար։

Յիշեալ պատգամաւորութիւնը աւելացնում է, որ թուրքերին կղզուց հեռացնելուն բաւական է միայն սկիզբը դնել, որից յետոյ նրանք կարող են հեռանալ աստիճանաբար։

ՓԱՐԻԶ.—Ենթադրում են, որ մայոր Ռեւալին շուտով կը ներկայացնի Էստերհազիի գործի առթիւ իր եզրակացութիւնները, որից յետոյ, այդ եզրակացութեանց հիման վրայ գեներալ Սաուսյէ կը հրամայէ Էստերհազիի քննութիւնը յանձնել զինուորական դատարանին։

Դատարանական քննիչ Բերտիւլը հարցափորձի ենթարկեց Մաթիէ Դրայֆուսին այն բանի վերաբերմամբ, որ նա փորձեր էր արել կաշառել Դրայֆուսի դատաքննութեան ժամանակ կաշառելու գնդապետ Ջենդհերին, որ այժմ վախճանուած է։

Խմբագիր-հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(М) 3—1

ԼՐԱԳՐԻ ՑՐԻՉՆԵՐ

Կարող են տեղ գտնել գրաւական ներկայացնելով։ Ցրիչը պէտք է երիտասարդ լինի և առողջ։ Ցանկացողները կարող են դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեանը։

52282 (М) 8—1.

ԳՆԵՑԷՔ ՏՕՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԺԱՆ

զործնական եւ օգտակար նուէր

3 Р. 50 Կ.

Սև մետաղի ժամացոյց։ Բանում է ճիշտ։ Լարւում է օրը մի անգամ։ Հաւաքւում է մի մետաքսի գործուած շղթայ և հետաքրքրական բրելոկ՝ փափուկ փխրուն փոքրիկներով։ Մի բոլորի կանխավճարով ուղարկում է անյապաղ։ Я. Рейхъ, Варшава, Маріанская 11-
138247. (М.) 3—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտարարում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ անտեսին հեյեր ունեցող կառքերով (ֆայտոն) ուղեւորելու համար, զբօսանքի սովորական կառքերի համար որոշուած գներից բացի, ուրիշ ոչ մի առանձին վճար չի սահմանուած, ուստի պատիւ ունի խնդրելու, որ եթէ կառապանները առանձին վճար պահանջեն անտեսին հեյեր ունեցող կառք նստելու համար, այդպիսի ամեն մի դէպքի մասին կառք նստողները յայտնեն Քաղ. Վարչութեանը բերանացի կամ քաղաքային պոստով գրաւոր։

(855) 3—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտարարում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ խոզի մսի բոլոր մասերի համար Քաղաքային Խորհուրդը գին է սահմանել 5 կոպ. ֆունտը։ Եթէ այդ գնից մսավաճառները աւելի պահանջեն, Քաղաքային Վարչութիւնը պատիւ ունի խնդրելու, որ այդ դէպքում գնողները դիմեն առեւտրական ոստիկանութեան սենեակները (բազար), որոնք գտնւում են վաճառանոցների հրապարակներում, կամ Քաղ. Վարչութեանը, ուր կարելի է գանգատուել բերանացի կամ քաղաքային պոստով գրաւոր։

(856) 3—2

ԱՐՀԵՍՏԱՆՈՑ

„ՆՈՐ ՇԷՆ“

Ծինում են փատարաններ (фaрсунки) ըստ Սարգիս Պօղոսբէկեանի նորագիւտ սիստեմի, որոնք շատ պատշաճ և նըպատակայարմար են սենեակներ տաքացնելու, խոհանոցներում կերակուր եփելու, կիր, ագիւս և այլ նիւթեր պատրաստելու համար։ Յիշեալ փատարանները վառւում են նաւթային ամեն տեսակ բաղադրութիւններով և, որ գլխաւորն է, առանց ծուխ ու մուր արտադրելու և միևնոյն ժամանակ անհամեմատ քիչ նաւթ են պահանջում։ Պօղոսբէկեանի սիստեմն արտօնուած է առեւտրի և մանուֆակտուրի դեպարտամենտից.

Պօղոսբէկեանը յանձն է առնում կառուցանել կիրօսին և այլ իւղեր արտահանող գործարաններ և հաստատել անընդհատ գործող մեքենաներ։

Հասցէն —Баку. Телефонная, противъ Михайловск. училища.
ДОМЪ Х. КАЗИМОВА 20—10

Дозв. цензурою, Тифлисъ, Декабря 19-го дня, 1897 г. Տպարան Ա. Ի. Պետրովի. Типографія А. И. Петрова, Голов. проспектъ, домъ № 1.